ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 86

«19» 10 2022թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գևորգ Ռազմիկի Թովմասյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականի պաշտոնից ազատելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2022թ. հոկտեմբերի 7-ի թիվ 11/221-Ա հրամանը, ինչպես նաև ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Գևորգ Թովմասյանի կողմից՝ քրեական գործերով մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանն առնչվող փաստաթղթերի և գրագրության հանձնում, իսկ ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ Միեր Մկրտչյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Պողոսյան Արթուր - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ,

Հանձնախմբի անդամներ՝

Մաթևոսյան Արամ - ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության ավագ դատախազ,

Սարգսյան Հայկանուշ - ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանն աջակցող ու վիճակագրության բաժնի պետ,

Ղահրամանյան Մարուշ - Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2022 թվականի հոկտեմբերի 26-ը:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ